ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՄՇԴ - 124 - 2026
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ ԵՎ ՆԱԽԱԳԾԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆՊԱՍՏ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «25» 02 2026թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Նպաստ տրամադրող), ի դեմս գլխավոր քարտուղար Հասմիկ Հակոբյանի (ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա), մի կողմից և Ծովինար Հովհաննիսյանը (այսուհետ՝ Նպաստ ստացող) (անձնագիր՝ AS 0287128, տրված՝ 17.07.2018թ.-ին, 010-ի կողմից) մյուս կողմից, հիմք ընդունելով կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի փետրվարի 4-ի թիվ 171-Ա/2 հրամանով հաստատված դրույթները, «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի մասին» օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի N 1910-Ն որոշմամբ հաստատված «1168. Արվեստների ծրագիր» ծրագրի «11005. Մշակութային միջոցառումների իրականացում» միջոցառման կատարումն ապահովելու նպատակով կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով նախատեսվում է նպաստ տրամադրել 2026 թվականի հունվարի 24-ից փետրվարի 1-ը Բարսելոնա քաղաքում կայացած «Բարսելոնա՝ ճարտարապետության համաշխարհային մայրաքաղաք 2026» ծրագրին Ծովինար Հովհաննիսյանի մասնակցության նպատակով 2026 թվականի հունվարի 24-ից փետրվարի 2-ը Երևան-Բարսելոնա/Բարսելոնա-Երևան ավիատոմսի համար ՝ 57888 (հիսունյոթ հազար ութ հարյուր ութսունութ) ՀՀ դրամի (այսուհետ՝ Նպաստի գումար) չափով:

2. ՆՊԱՍՏԻ ԳՈՒՄԱՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1. Նպաստի գումարը տրամադրվում է Նպաստ ստացողին՝ Պայմանագրով նշված բանկային հաշվին՝ դրամական միջոցների փոխանցման միջոցով: Նպաստի գումարի փոխանցումը կատարվում է պայմանագրի կնքման պահից տասն աշխատանքային օրվա ընթացքում:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. **Նպաստ տրամադրողն իրավունք ունի՝**

3.1.1.Նպաստ ստացողից պահանջել հատուցելու Նպաստի գումարն ընդունելուց հետո հրաժարվելու հետևանքով իրեն պատճառված իրական վնասը:

3.1.2.Նպաստ ստացողի կողմից ներկայացված հաշվետվության հետ կցվող անհրաժեշտ փաստաթղթերի իսկությունը չհամապատասխանելու դեպքում միակողմանի լուծել պայմանագիրը:

3.2. **Նպաստ տրամադրողը պարտավոր է՝**

3.2.1.Պայմանագրի 2.1 կետով սահմանված կարգով Նպաստ ստացողին փոխանցել Պայմանագրի 1.1 կետով սահմանված Նպաստի գումարը:

3.3. **Նպաստ ստացողն իրավունք ունի՝**

3.3.1. Մինչև Նպաստի գումարն իրեն հանձնելը ցանկացած պահի հրաժարվել դրանից: Այս

դեպքում Պայմանագիրը համարվում է լուծված:

3.4. **Նպաստ ստացողն պարտավոր է՝**

3.4.1. Ընդունել Նպաստի գումարը:

3.4.2. Հատուցելու Նպաստի գումարը փոխանցելուց հետո, դրա ընդունելուց հրաժարվելու հետևանքով Նպաստ տրամադրողին պատճառված իրական վնասը:

4. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

4.1. Նպաստ ստացողը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն է կրում իր կողմից ներկայացված փաստաթղթերի իսկության համար:

4.2. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

4.3. Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայասատանի Հանրապետության օրենսդրությունը:

4.4. Պայմանագրում փոփոխությունները և լրացումները կարող են կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

4.5. Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ՎԱՎԵՐՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՆՊԱՍՏ ՏՐԱՄԱԴՐՈՂ	ՆՊԱՍՏ ՍՏԱՑՈՂ
Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	Ծովինար Սիսակի Հովհաննիսյան
Ք. Երևան, Կառավարական 2-րդ շենք	ք.Երևան, Այգեստան 11 փ., 89 շ., 14 բն.
ՀՀ ՖՆ գործառական վարչություն	Անձնագիր՝ AS 0287128, տրված՝ 17.07.2018թ.-ին, 010-ի կողմից
Հ/Հ 900011032878	«Ինեկոբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 02698732	Հ/Հ 2050564507242601
Գլխավոր քարտուղար՝	էլ. փոստ՝ covhovhannisyan78@gmail.com
	Հեռ.՝ 091 347 533
_____ Հ. Հակոբյան	_____ Ծ. Հովհաննիսյան
(ստորագրություն)	(ստորագրություն)

Կ.Տ.